Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ՊԱՏՎԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՂ» ՄԵԴԱԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Պատվավոր ծառայող» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ ծառայություն) զարգացման գործում նշանակալի ավանդ ունեցող, խախտումների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցած էկոպարեկային ծառայողներին, որոնց ջանքերի և անմիջական մասնակցության շնորհիվ կանխվել են բնությանը սպառնացող ռիսկերը, ցուցաբերվել է համագործակցության և ժամանակին արձագանքելու վառ օրինակ:

2. «Պատվավոր ծառայող» մեդալն իրենից ներկայացնում է 45 մմ տրամագծով ոսկեգույն շրջանակ, որի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Զինանշանի վերևի հատվածում գրված են «ՊԱՏՎԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՂ», իսկ ներքևի հատվածում՝ «ԷՊԾ» բառերը:

3. «Պատվավոր ծառայող» մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30 x 45 մմ չափսերով, վրայից ուղղանկյունաձև շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչը կարմիր է՝ 2 ուղղահայաց 7 մմ լայնությամբ կապույտ զոլակներով, որոնք կախիչի եզրագծերից ունեն 3 մմ հեռավորություն:

4. «Պատվավոր ծառայող» մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ECOPATROL SERVICE» բառերը: Մեդալը դարձերեսից համարակալված է:

5. «Պատվավոր ծառայող» մեդալը շնորհում է ծառայության պետը: «Պատվավոր ծառայող» մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Պատվավոր ծառայող» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.07.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ